ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջի կատարմամբ, որով համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշում է համայնքի ավագանին: Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 71,04 տոկոսի սահմաններում: Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափը կազմում է 832000 /ութ հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ: Որոշման նախագծով համայնքի ղեկավարի վարձատրության չափը կազմում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի վաթսուն տոկոսը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման հաստատման դեպքում համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի վարձատրությանն ուղղվող միջոցները տարեկան կտրվածքով նախորդ տարվա համեմատ կավելանան 781200 /յոթ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամով կամ շուրջ 15 տոկոսի չափով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ